

ՀՏԴ՝ 801.8

DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

ԵՌՅԱԿ ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ  
ԳՈՒՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՐԳԻ ԲԱՆԱԶԵՎԵՐՈՒՄ

*Սարգիս Գ. Պետրոսյան*

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Հայաստանի նախնադարյան հասարակության եռադասյա կառուցվածքով պայմանավորված դիցարանի գլխավոր աստվածությունների եռյակ կազմելու հնդեվրոպական սկզբունքը իր արտացոլումն է գտել նաև հայոց մանկական խաղերի խաղամուտը նշող գուշակման և հաշվերգի բանաձևերում: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը, օգտագործվել են հայոց հին պատմիչների երկերում առկա նյութերը, «Մասնա ծոեր» էպոսի առաջին և երկրորդ ճյուղերի պատումները, ազգագրագետների գրառած նյութեր և այլն: Վերլուծություն. Նախնադարյան մոգական ծիսակարգի յուրահատկություններից մեկն եղել է որևէ գործողության հաջողությունը երաշխավորելուն կոչված աստվածությունների եռյակի հիշատակումը բուն գործողությունը սկսելուց առաջ: Այդ ավանդական հիշատակումները ամբողջովին չեն մոռացվել, որովհետև նրանց ինչ-ինչ հատվածներ սերնդեսերունդ շարունակել են հնչել մեր մանուկների շուրթերին: Հողվածում վերլուծվել են «Ալնիս, Բալնիս, հավատամ Սուրբ Սարգիս» գուշակման բանաձևը և «Ալա, Բալա, Նիցա» խաղամուտի հաշվերգի՝ դրա զուգահեռը: Արդյունքներ. Խաղամուտերի գուշակային բանաձևում և զուգահեռ տեքստի առաջին տողում հիշատակված են երեք աստվածություններ, որոնք իրենց գործառույթներով նույնն են եղել, ինչ հայոց հին տոմարի յուրաքանչյուր ամսի երեք տասնօրյակները գլխավորած օրերին իրենց անունները տված Արեգ, Երեզկան, Գրգուռ աստվածությունները:

**Բանալի բառեր՝** եռադասություն, Արնի, Բերքուրարիքի, Հողմ-Ամպրոպի աստվածություններ, Ալնիս, Բալնիս, Ս. Սարգիս, Ալա, Բալա, Նիցա:

Ինչպես հղել՝ Պետրոսյան Ս. Եռյակ դիցանուններ հայկական մանկական խաղերի գուշակման և հաշվերգի բանաձևերում // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Ն. 1(26): 64-74 էջեր: DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

## TRIAD OF THEONYMS IN FORMULA OF DIVINATION AND COUNT-OUT RHYMES IN ARMENIAN CHILDREN'S GAMES

*Sargis G. Petrosyan*

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

**Introduction:** In connection with the three-estate structure of the primitive society of Armenia, the Indo-European principle of creating triads of the main deities of the pantheon (deities of the Sun, Thunder and Productive forces of nature) was reflected in the formulas of divination and count-out rhymes in Armenian children's games. **Methods and materials:** We have used the historical-comparative method of research, materials, that found in the works of ancient Armenian historiographers, narrations of the first and second branches of the "Sasna Tsrer", materials from the records of ethnographers, etc. **Analysis:** One of the features of the primitive magical ritual was the evidence of the triad of deities, designed to guarantee the success of any action before the action itself began. These traditional evidences have not been completely forgotten, because some parts of them continue to sound from generation to generation in the mouths of our children. The article considers the opening formulas of divination "Alnis, Balnis, I believe in Saint Sargis" and its parallel count-out rhyme: "Ala, Bala, Nica". **Results:** In the formulas of divination of the games and in the first line of the parallel text of count-out rhyme three deities are mentioned, whose functions were the same as the deities Areg, Erezkan, Grgur, who gave names to the days leading three decades of each month of the Armenian old calendar.

**Key words:** *three estates, deities of the Sun, Thunder and Productive forces of nature, Alnis, Balnis, St. Sargis, Ala, Bala, Nica.*

**Citation.** Petrosyan S. *Triad of Theonyms in Formula of Divination and Counting-out Rhymes in Armenian Children's Games.* // "Scientific Works" of SCAS NAS of Armenia. Gyumri. 2023. V. 1(26). 64-74 pp. DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

## ТРИАДА ТЕОНИМОВ В ФОРМУЛАХ ГАДАНИЯ И СЧИТАЛКИ В АРМЯНСКИХ ДЕТСКИХ ИГРАХ

*Саргис Г. Петросян*

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** В связи с трехсловной структурой первобытного общества Армении индоевропейский принцип создания триад главных божеств пантеона, т.е. божеств Солнца, Грома и Производительных сил природы, нашел свое отражение и в формулах гадания и считалки в армянских детских играх. **Методы и материалы:** В работе использован историко-сравнительный метод исследования, использованы материалы, находящиеся в трудах древнеар-

мянских историографов, сказы первой и второй ветвей эпоса "Сасна Црер", материалы из записей этнографов и др. *Анализ:* Одной из особенностей первобытного магического ритуала было упоминание о триаде божеств, призванных гарантировать успех любого действия до начала самого действия. Эти традиционные упоминания не были полностью забыты, потому что некоторые их части продолжают из поколения в поколение звучать в устах наших детей. В статье анализируются поступления в игру гадальная формула "Алнис, Балнис, верю в святого Саргиса" и ее параллель: считалка "Ала, Бала, Ница". *Результаты:* В гадальной формуле игр и в первой строке параллельного текста считалки упоминаются три божества, функции которых были такими же, как у божеств Арег, Ерезкан, Гргур, давших имена дням, ведущим три декады каждого месяца армянского старого календаря.

**Ключевые слова:** *трехсловие, божества Солнца, Грома и Производительных сил природы, Алнис, Балнис, Св. Саргис, Ала, Бала, Ница.*

**Как цитировать:** Петросян С. Триада теонимов в формулах гадания и считания в армянских детских играх. // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри. 2023. Т. 1(26). 64-74сс.

DOI: 10.52971/18294316-2023.26.1-64

**ՆԱԽԱԳԱՆ.** Նախնադարյան մոզական ծիսակարգի յուրահատկություններից մեկն էլ եղել է որևէ գործողության հաջողությունը երաշխավորելուն կոչված աստվածությունների եռյակի հիշատակումը բուն գործողությունը սկսելուց առաջ: Այդ ավանդական հիշատակումները ամբողջովին չեն մոռացվել, որովհետև նրանց ինչ-ինչ հատվածներ սերնդեսերունդ շարունակել են հնչել մեր մանուկների շուրթերին: Այդպիսի մեկին՝ խաղամուտի սկիզբն ազդարարող «Ալնիս, Բալնիս, հավատամ Սուրբ Սարգիս» գուշակման բանաձևին մենք անդրադարձել էինք մոտ երկու տասնամյակ առաջ [16, էջ 12]: Դրանում Ս. Սարգսի հիշատակումն արդեն խոսում է դրա երբեմնի մոզական բանաձև լինելու մասին, որովհետև հայտնի է ժողովրդական քրիստոնեության մեջ Ս. Սարգսի հեթանոսական Հոդվ-Ամպրոպի աստվածների գործառույթներով օժտված լինելու հանգամանքը: Դա միաժամանակ հիմք է տալիս բանաձևում նրանից առաջ հիշատակված Ալնիսին և Բալնիսին ենթադրաբար համարելու Ս. Սարգսի հեթանոսական նախորդի հետ միասին եռյակ կազմած աստվածություններ:

Վերևում նշված բուն աղբյուրներից բացի, օգտագործվել են հայ և օտար բանագետների, լեզվաբանների և պատմաբանների ընդհանուր բովանդակությամբ աշխատություններ: Դրանցից արժեքավոր են եղել Մ. Աբեղյանի, Ա. Ղանալանյանի, Ե. Մելետինսկու, Վ. Աֆանասևայի գրականագիտական, Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ստ. Մալխասյանցի լեզվաբանական, Ի. Մեշչանինովի, Գ.Մելիքիշվիլու ուրարտագիտական աշխատությունները և «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» ժողովածուի I հատորի նյութերը:

Աշխատանքը նպատակ ունի ապացուցելու, որ նախնադարյան մոզական ծիսակարգի արտասանվող առանձին հատվածներ ընդօրինակվել են իր ժամանակի մանուկների կողմից, իսկ այնուհետև, սերնդեսերունդ փոխանցվելով, հասել մեր ժամանակներ: Արդիական է այնքանով, որ հաճախ անտեսվել են մանուկների միջոցով մեզ հասած և նախնադարից եկած հնագույն պաշտամունքի մնացուկներ: Դրանք կարևորվում են նախնադարյան մարդու մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելու տեսանկյունից:

*Աստվածությունների մի հին եռյակի մասին*

Միասնության դարաշրջանի հնդեվրոպական հասարակությանը բնորոշ էր երեքդասյա հասարակական կարգը՝ եռադասությունը: Դասերին համապատասխան՝ հնդեվրոպական ցեղերն ունենում էին երեք գլխավոր աստվածություններ՝ քրմական դասի երկնային դասապետը համարվում էր Արևի աստվածը, զինվորական դասինը՝ Հողմ-Ամպրոպի աստվածը, բարիքիներ արտադրողների (հողագործներ, անասնապահներ) դասինը՝ Բերքուբարիքի անձնավորում աստվածությունը: Քանի որ նախնադարյան մեր նախնիների տարին բաղկացած էր համարվում 12 ամիսներից՝ յուրաքանչյուրը բաղկացած 30 օրից, որոնք միավորվում էին 3 տասնօրյակների մեջ, ուստի յուրաքանչյուրը տասնօրյակ սկսվում էր այդ աստվածություններին ձուլված և նրա անունը (մականունը, մակդիրը) կրող օրով: Առաջին տասնօրյակի առաջին օրը հայոց հին տոմարում կոչվում էր *Արեգ*, երկրորդ տասնօրյակի առաջին օրը (ամսի 11-րդ օրը) կոչվում էր *Երեզկան*, իսկ երրորդ տասնօրյակի առաջին օրը (ամսի 21-րդ օրը) կոչվում էր *Գրգուռ*: Դրանցից առաջինը Արևի աստծու, երկրորդը՝ Բերքուբարիքի, երրորդը՝ Հողմ-Ամպրոպի աստվածության անունը կամ դիցանվան մակդիրն (աստծու մականունն) էր [18, էջեր 420-439]: Այս աստվածությունների գուգահեռ կերպարների՝ նույնիսկ նույն հերթականությամբ հանդիպում ենք հետևյալ հնագույն առասպելում:

Քնից սարսափահար արթնացած Մարաստանի Աժդահակ թագավորը կանչում է իր խորհրդականներին և նրանց պատմում իր երազը. «Էր ինձ ասէ, ով սիրելիք, լինել այսօր յերկրի անձանօթում, մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ գագաթն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ, եւ ասէին գոգցես յերկրին Հայկազանց գայս լինել: Եւ ի նայել իմ յերկարագոյնս ի լեառնն կին ոմն...աչեղ, բարձրահասակ եւ կարմրայտ, երկանց ընթոնեալ ցաւովք: Եւ ի յերկարագոյն նայել իմ յայնպիսի երեւումն եւ հիացման լինել՝ ճնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ եւ բնութեամբ: Առաջինն գերանսն ածեալ ի վերայ առիծու՝ սլանայր յարեւմուտս, եւ երկրորդն ի վերայ ընծու՝ ի հիւսիսի հայելով, իսկ երրորդն զվիշապ անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տերութեանս...» [13, գիրք Ա, գլուխ իզ]:

Ապացուցված է, որ որպէս Տիգրան Երվանդյանի մասին վիպերգի մաս բերված այս դրվագը մի հին առասպել է [1, էջ 97-115]: Ինչպէս տեսանք, նորածին դիւցազուններից մեկը՝ առյուծ սանձածը, սլանում էր արևմուտք, իսկ արևելք-արևմուտք շարժման ուղղությունը արևի օրական շարժման ուղղությունն է՝ արևելքում ծագող արևը մայր է մտնում արևմուտքում: Անկասկած, արևի անձնավորում այս դիւցազնը լինելու է հնդեվրոպական «Պարզ երկնքի և արևի աստվածության» ժառանգորդը, որի հասարակական գործառույթները գուգադիպում էին քրմական դասի գործառույթներին [24, էջ 793-794]: Մայր դիցուհու ճնած երկրորդ դիւցազնը՝ ընձառյուծ սանձածը և հյուսիս արշավողը, անձնավորումն է գարնան և բնության զարթոնքի, որովհետև նրա շարժման ուղղությունը (հարավից հյուսիս) հենց գարնան շարժման ուղղությունն է հասարակածից հյուսիս ընկած բոլոր երկրներում: Նույն այդ ուղղությամբ են հետ չվում գարնան ավետաբեր թռչունները՝ արագիլը և ծիծեռնակը: Մեր այս դիւցազնը ժառանգորդն էր

լինելու հնդեվրոպական «տնտեսական գործունեությունը հովանավորող և բերրիությունն անձնավորող աստվածության», որի հասարակական գործառույթները համընկնում էին բարիքների արտադրողների դասի գործառույթների հետ [20, էջեր 58-59: 17, էջեր 324-325: 24, էջ 794]: Մայր դիցուհու ծնած երրորդ դուստրը՝ վիշապ սանձածը, արծվաթռիչը և Աժդահակի մահաբերը, որը վիպերգում նույնացված է եղել Տիգրան Երվանդյանի հետ, լինելու էր ժառանգորդը հնդեվրոպական «Ամպրոպի և կայծակի, երկնամերձ լեռան աստվածության», որի հասարակական գործառույթները համընկնում էին զինվորական դասի գործառույթների հետ [17, էջեր 325-326: 24, էջեր 793-794]:

Այս առասպելը բաղկացուցիչ մասն էր լինելու տարեմուտի թատերականացված արարողակազմի: Հետևենք դուստրուհու ծննդի հերթականությանը: Նախ ծնվում է առյուծ սանձած՝ արևն անձնավորողը: Սա տարեմուտն էր խորհրդանշում գարնանային գիշերահավասարը (մարտ 21-22): Ապա ծնվում է ընձառյուծ հեծած գարնան անձնավորում դուստրը: Նա խորհրդանշում է ձմեռային ծանր նիբից արթնացող բնությունը: Վերջապես ծնվում է օձավիշապ Աժդահակի մահաբերը՝ վիշապ սանձած արծվաթռիչ դուստրը, հողմի և ամպրոպի անձնավորումը: Նրա ծնունդը խորհրդանշում է գարնանային օդերևույթների բուռն գործընթացը, երբ երկնքում, բարձր լեռների կատարներին քամու կուտակած ամպրոպալից ամպերն սկսում են որոտալ և կայծակել, տեղում են առաջին անձրևները: Առասպելաբանական մտածողությամբ այս ամենն ընկալվելու էր նաև որպես տիեզերքի լուսավոր-կենսաբեր կողմերի (արևելք, հարավ, երկինք) անձնավորումները համարված գերբնական էակների հաղթանակը նրա խավարմահաշունչ կողմերի (արևմուտք, հյուսիս, ընդերք) անձնավորումների դեմ, կյանքի հաղթանակը մահվան դեմ, նոր տարվա հաղթանակը հին տարվա դեմ [17, էջեր 326-327], ազատասեր-հայրենասեր դուստրի (այս դեպքում Տիգրան Երվանդյանի) հաղթանակը օտարերկրյա բռնակալի դեմ:

Տիգրան անունը ծագումով իրանական է, բայց իրանցիների մեջ հազվադեպ կիրառություն գտած [2, էջեր 335-336]: Ըստ Ն. Աճառյանի, այս անվան իրանական նախաձևը ունեցել է *tigrarāna* տեսքը՝ կազմված *tigra* «նետ» և *rāna* «մարտնչող» բառերից, ապա արագաբանության օրենքով վերածվել է *tigrāna*-ի, որից էլ մեր *Տիգրան*-ը [6, էջեր 400, 638]: Մեր կարծիքով, անվան առաջին մասը ներկայացնում է ոչ թե իրան, *tigra* «նետ», այլ *\*tig-//tég-* (որից՝ հայ. տէգ) բառը [19, էջեր 427-430]: Այսպիսի ստուգաբանության հավաստիությունը հաստատվում է Տիգրան Երվանդյանի վերաբերյալ Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններով: Դրանց համաձայն, հայ դուստրը Աժդահակի դեմ մարտնչել է ոչ թե նետով, այլ նիզակով [13, Ա, իզ] և նրան սպանել է նիզակով [13, Ա, իթ], ուստի կոչվել է *նիզակաւոր* [13, Ա, իթ]:

Ամպրոպի և հողմի աստվածությունների կերպարները շատ ժողովուրդների առասպելաբանություններում երբեմն այնքան սերտաճած են լինում, որ դրանք միևնույն անվան տակ են հանդես գալիս: Օրինակ, իրանական ամպրոպային Վերթրազանան պատկերացվում է նաև իբրև «պինդ քամի» [1, էջ 90], իսկ հին գերմանների Թոր/Դոնարը ոչ միայն շանթառաք ամպրոպային աստված էր, այլև հողմի անձնավորում [27, էջ 545]: Այսպիսի դեպքերի միջոցով հասկանալի է դառնում, թե ինչու ուրար-

տական Ամպրոպի աստված Թեյշեբան հանդես է գալիս նաև <sup>4</sup>IM գաղափարագրի տակ [9, էջ 41], իսկ նրա պատվին Թեյշեբաինի կոչված քաղաքի անունը գրվում է նաև <sup>4</sup>IM-ու URU ձևով [22, էջ 182], երբ այս <sup>4</sup>IM// <sup>4</sup>Iškur-ը ուղղակի «հողմ, քամի» է նշանակում [23, էջ 651]: Հայկական ժողովրդական հավատալիքներում ևս «որոտացող էակը պատկերա- նում է իբրև քամի», «որոտացողը մտածվում է նաև որպես հողմ» [1, 66, 91]: Ժողովրդա- կան քրիստոնեության մեջ Սուրբ Սարգսի կերպարը, ինչպես հայտնի է, հետևորդն է ոչ միայն IV դ. քրիստոնյա գորավարի կերպարի, այլև հեթանոսական հողմի աստվածու- թյան: Բայց ավանդություններում նա հանդես է գալիս նաև Ամպրոպի շանթառաք աստծու դերում: Դրանցից մեկում՝ Ղզըլբաշի Ուշաբ թագավորի (հմմտ. Տիգրան Եր- վանդյանի հակառակորդ մար Աժդահակը) դեմ կոիվ տալիս, նա «ամբի պես կեռորմ, կեծակի նման տրաքտրաքրմ, քանդուքար ու անըմ թաքավերի բերդերն ու էնտեղ կա- պած, կշկոած հայերին ագատրմ» [10, էջ 366]:

**Մանուկների գործածած դիցանունների շուրջ**

Խաղն առաջինն սկսելու հարցը մանուկների մրցակից երկու կողմերը որոշում էին խաղամուտի գուշակման բանաձևի օգնությամբ: Խմբերից մեկի ավագը իր փակ ափերից մեկի մեջ պահած էր լինում որևէ մանր իր: Այն գտնելու համար մրցակից կող- մի ավագը նրա առաջ պարզած բռնուցքներին հերթականությամբ մատը դնելով արտա- սանում էր. «Ալնիս, Բալնիս, հավատամ Սուրբ Սարգիս, զիմ ծիլ հա՛ն, տո՛ւր հիս» [11, էջ 18]: Բերված *Ալնիս* և *Բալնիս* դիցանունների վերջնաձայն *u* հնչյունը, հավանաբար, ա- ռաջին դեմքի դիմորոշ հոդն է: *Ալնիս*-ի մեջ նրա առանձնացումից հետո մնում են դի- ցանվան *ալ-* հիմքն ու *-նի* վերջածանցը: Այս վերջածանցը ծագում է հ.-ե. \*-eni-io-/-ā բա- դադրյալ վերջածանցից. Հմմտ. *գաղտնի, յայտնի, նախնի* [21, էջ 809], իսկ \*al- հիմքային արմատն առկա է նաև *աղթաման* «ձեռքի կամ ոտքի ապարանջան» և *ալի* «առանցք, եր- կանաքար, ճախարակ» բառերում [15, էջ 39: 7, էջ 12, 13: 4, էջ 126]: Հմմտ. Հուն. ἄλωϛ «շրջանակ, սկավառակ», «լուսապսակ. բակ՝ արևի և լուսնի շուրջ» և ἀλακάτα//ήλακάτα «առանցք, առնի, իլ, իլիկ, ճախարակ» բառերը [25, էջ 74], որոնց հիմքում ևս «շրջանակ» և «պտտվող ինչ» գաղափարներն են [11, էջ 15]:

Ուրարտուի Սարդուրի I (մ.թ.ա. մոտ 840-825 թթ.) արքայի արձանագրություն- ները հայտնում են, որ Tušpa (Տոսպ, Վան) քաղաքի միջնաբերդը կառուցվել է Աlniսու քաղաքից բերված քարերով [8, էջ 39-40: 28, N 1]: Այս տեղանվան մեջ ևս առկա է *Ալնի* դիցանունը. Աlniսու//Ալնի-ուն-ոյ: Ամենայն հավանականությամբ, *Ալնի*-ն արմատա- կիցն է Aldi դիցանվան, որը «Մհերի դոան» ուրարտական արձանագրության մեջ բեր- ված է որպես Haldi դիցանվան տարբերակ [29, էջեր 347-348] (Aldi<Al-di, որտեղ di//հայ. դի-ք): Մուծածիրյան Խալդի աստծու պաշտամունքի Ուրարտու ներմուծումից հետո Haldi և Aldi դիցանունները բաղարկվել էին և Խալդին սկսել էր պատկերվել որպես ա- րևային աղեղնավոր աստված [9, էջ 35], իսկ Արև աստծուն ձևված «Մհերի դուռ» պաշ- տամունքային կառույցը վերանվանվել էր «Խալդիի դարպասներ» [26, էջ 191-192]: Աս- վածների հիման վրա կարելի է մանկական խաղամուտի գուշակման բանաձևի առա- ջին անունը՝ *Ալնի*-ն (դիմորոշ հոդով՝ *Ալնիս*), համարել սեպագրային Աlniսու քաղաքին իր անունը տված արևային աստծու \*Alni անունը:

*Ալնիս*-ից հետո խաղամուտի գուշակման բանաձևում հիշատակված *Բալնիս* (<\*Բալնի-ս <\*Բալ-նի) դիցանունը, լինելով եռյակի անդամի անուն և գտնվելով Արևի աստծու և հողմ-ամպրոպային բնույթի Ս. Մարգսի անվան միջև, լինելու էր բերքուբարիքի անձնավորում աստվածության անուն: Կազմության տեսանկյունից *Բալ-նի-ս* հմմտ. *Ալ-նի-ս*, իսկ *բալ//բաղ* արմատի համար հմմտ. միջնադարյան «Բառգիրք հայոց»-ի «*Բաղկանալ* – աճել, կամ գոյանալ, կամ բազմանալ, կամ կենդանանալ, կամ զարգանալ» [7, էջ 48] բառի արմատը: Կարծում ենք, որ այս դեպքում ևս գործ ունենք *բալ//բաղ* արմատի հետ՝ ծագած հ.-ե. \*bhl- արմատից: Հ.-ե. այս արմատի \*bhel-/\*bhol-/\*bhl- ձայնադարձերից ունենք բուսաշխարհի մի շարք ներկայացուցիչների անուններ՝ սկսած *բեղուն*-ից ու *բողբոջ*-ից մինչև *բողկ* ու *բալ/բալենի*:

Բերված խաղամուտի գուշակման բանաձևի դիցանուններից *Ալնի*-ին և *Բալնի*-ին արմատակից անունների հանդիպում ենք մանկական խաղամուտի հաշվերգի տեքստերից մեկում: Ահա՛ այսօր էլ մանուկների շուրթերին հնչող տեքստի 1-ին տողը. «Ալա, Բալա, Նիցա» («Ալա, բալա, նի-ցա/Ռուս կաբա նի-ցա/ հեյ գիտի փան-չո/Ռուս կապի-տանչո/փալանչո». հիշողությամբ գրի է առել 1931թ. ծնված քույրս՝ Լենա Հովհաննիսյանը): *Ալ-ա* և *Բալ-ա* անունները *Ալ-նի-ս* և *Բալ-նի-ս* դիցանունների փաղաքշական ձևերն են մանկական լեզվում: Դրանց վերջնաձայն *-ա*-երը հաջորդ *նից-ա* բառի հետ միասին գալիս են *-այ* վերջածանցից. Հմմտ. *արք-այ*, *բոր-այ* «բորենի», *կր-այ* «կրիա», *հորայ* «խորթ հայր», *ւոր-այ* «խորթ մայր» [14, էջ 88], *Արայ*, *Շար-այ* դիցանունները: Ուրեմն *Ալա-ն Ալնի*-ի նման, իսկ *Բալա-ն Բալնի*-ի նման լինելու էին Արևի և Բերքուբարիքի անձնավորում աստվածների անունները: Բնականաբար, Ալայից և Բալայից հետո հիշված Նիցան լինելու էր Հողմ-Ապրոպի մի աստվածություն, ինչպիսին եղել է Ալնիսից և Բալնիսից հետո հիշատակված Ս. Մարգսի հեթանոսական նախորդը:

Գր. Մագիստրոսին հայտնի էր *Նիցա*-ի *նից* արմատն հիշեցնող *նիս* «փյուն, քամի» բառը, որ հոլովված [5, էջ 453] (ի նսէ) լինելով, համարվել է անստույգ բառ (ուղղականը կարող էր լինել նաև \*նուս պատճառաբանությամբ) [5, էջ 453: 21, էջ 568]: Բարեբախտաբար, այս արմատը \*նես տեսքով գտնում ենք նաև *նեսիս* (\*նես-ափայ) «անորոշ տեսակի քամի» բառի մեջ, որը, ուրիշ երեք քամիների հետ, ըստ Ղ. Ալիշանի, գործում է «ընդ մեջ *ջուրց* և երկնի» և դրանք «բազում անգամ յոգուտ *յաղբերաց* և *յերակս ջրոց* յաճախեն» [3, էջ 40: 5, էջ 385: 12, 451]: Մեր կարծիքով, *նեսիս* <\*նես-ափայ՝ շեշտակիր վերջնավանկին նախորդած միջնավանկի *ա*-ի օրինաչափ հնչյունափոխությամբ և սղումով: Այստեղ բարբառային ազդեցությունը նկատվում է նաև *ափն* > *ափ* անցման մեջ: Իսկ գրաբարում *ափն* նշանակում էր «ծայր, եզր, ափ, ջրափ» [4, էջ 365] և հնդեվրոպական ծագումով բառ է [21, էջ 105]:

Քամու և ջրի փոխադարձ կապի առնչությամբ *ափն* բառը գրաբարյան ձևով է բերված Ղ. Ալիշանի հիշատակած հետևյալ վկայության մեջ. «Շտեմարան իմն է *ի ջուրս, յորմէ օղբ էլանէն* ի դուրս, *Հրասափն, Քառասփն, Մարսափն, Մագատն* կամ *Նագատն. էլք սոցա ի ծովէ* են գնացք սոցա յերկինս» [3, էջ 40]: Հ. Ակինյանի բանավոր հաղորդման հիման վրա Հ. Աճառյանը գրում է. «Սույն գրվածքն է Ջենոն Իմաստ[ասերի] հավելվածը, ուր ունինք սակայն *Քարսափն* (և ո՛չ *Քառսափն? Նագատն*, չկա Մագատն)» [4, էջ 127]:

Ինչպես տեսնում ենք, Հ. Աճառյանի դիտողությունները այս քամիներից երեքի անունների *ափն* բաղադրիչին չի վերաբերում, որով *նեսփա* բառի *-փա* բաղադրիչի *ափն*-ից ծագելը մնում է հավանականության սահմաններում: Ի տարբերություն *նեսփա* < \**նես-ափայ* բառի *նես* բաղադրիչի՝ \**նիսա*-ի *նիս*- արմատը կարող էր ծագել նախնական \**նես*-ից և հաջորդ տողի վերջին բառի հնչյունական ազդեցությամբ, նրա հետ հանգավորվելով, վերածվել *նիցա*-ի:

Խաղամուտի հաշվերգի տեքստի առաջին՝ բանաձևային տողին հաջորդող տողերը, մեր կարծիքով, ուղղակի կապ չունեն նրա հետ: Խաղամուտի հաշվերգի բուն տեքստից առանձնացած լինելով, նրա բանաձևային բառերը հարում են ամբողջությամբ վերևում բերված գուշակային բանաձևի բառերին: Ընդ որում, այդ եռյակների անդամների անուններն իրենց բնույթով նույնական են հայոց հին տոմարի յուրաքանչյուր ամսի տասնօրյակները գլխավորած օրերին իրենց անունները տված *Արեգ*, *Երեզկան*, *Գրգուռ* դիցանունների հետ: Հատկանշական է, որ քննարկված բոլոր դիցական եռյակների անդամները բերված են նույնպիսի հերթականությամբ՝ Արևի, Բերքուբարիքի, Հողմ-Ամպրոպի աստվածներ:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Խաղամուտի գուշակային բանաձևում և հաշվերգի տեքստի առաջին տողում հիշատակված երեք աստվածությունները գործառնություններով նույնն են, ինչ հայոց հին տոմարի յուրաքանչյուր ամսի երեք տասնօրյակները գլխավորած օրերին իրենց անունը տված այն աստվածությունները, որոնք հայտնի են Աժդահակի երագի առասպելից: Ընդ որում, քննարկված բոլոր դեպքերում նրանք հանդես են գալիս նույն՝ Արևի, Բերքուբարիքի, Հողմ-Ամպրոպի աստվածություններ հերթականությամբ:

Հագարամյակների ճանապարհ անցած մանկական խաղերի քննության առարկա խաղամուտի գուշակման բանաձևը և հաշվերգի տեքստի բանաձևային գլխամասը բացահայտելով հայոց առասպելաբանության և ազգագրության բնագավառներում իրենց ունեցած սերտ կապերը, դրանով իսկ հաստատում են դրանք կապակցված դիտելու մեր որդեգրած մոտեցման իրավացիությունը:

#### Գ ր ա կ ա ն ո լ թ յ ո �ւ ն

1. Արեղյան Մ. *Երկեր*: Երևան: ԳԱ հրատ.: Հ. I: 1966: 571 էջ:
2. Ադոնց Ն. *Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. Մ.թ.ա.*: Երևան: «Հայաստան» հրատ.: 1972: 430 էջ:
3. Ալիշան Ղ. *Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը*: Երևան: «Հրագրան»: 2002: 295 էջ:
4. Աճառյան Հ. *Հայերեն արմատական բառարան*: Երևան: ԵՀ հրատ.: Հ. I: 1971: 699 էջ:
5. Աճառյան Հ. *Հայերեն արմատական բառարան*: Երևան: ԵՀ հրատ.: Հ. III: 1977: 635 էջ:
6. Աճառյան Հ. *Հայերեն արմատական բառարան*: Երևան: ԵՀ հրատ.: Հ. IV: 1979: 674 էջ:
7. «*Բառգիրք հայոց*»: Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամայլանի: Երևան: Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան» հրատ.: 1975: 445 էջ:
8. «*Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա*»: Հ. I: *Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը*: Երևան: ԵՀ հրատ.: 1981: 943 էջ:



9. Հմայակյան Ա. *Վանի թագավորության պետական կրոնը*: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: 1990: 158 էջ:
10. Ղանալանյան Ա. *Ավանդապատում*: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: 1969: 530 էջ:
11. Մալխասյանց Ստ. *Հայերեն բացատրական բառարան*: Հ. I: Երևան: «Պետհրատ»: 1944: 608 էջ:
12. Մալխասյանց Ստ. *Հայերեն բացատրական բառարան*, Հ. III: Երևան: «Պետհրատ»: 1944: 614 էջ:
13. Մովսիսի Խորենացույ պատմություն հայոց: Քննական բնագիրը Ս. Արեղյանի և Ս. Հարությունյանի: Երևան: ԵՀ հրատ.: 1981: 587 էջ:
14. Մուրադյան Մ. *Բառագիտություն*: «Հայոց լեզվի պատմական քերականություն»: Հ. II: Երևան: ՀՄՍՀ ԳԱ հրատ.: 1975: 383 էջ:
15. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»: Երկրորդ հրատ.: Հ. I, Երևան: ԵՀ հրատ.: 1979: 1140 էջ:
16. Պետրոսյան Ս. *Այնիմու քաղաքի և Արևաստծու դերը վաղ Ուրարտուի կրոնական քաղաքականության մեջ // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Հ. VII: Գյումրի: 2004: 11-18 էջեր:
17. Պետրոսյան Ս. *Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում*: ՀՀ ԳԱԱ ՊԻ «Մերոպ Աշնեան մատենաշար»: Թիվ 21: Երևան: ՀՀ ԳԱԱ հրատ.: 2006: 473 էջ:
18. Պետրոսյան Ս. *Հին հայոց եռամասն ամսուայ Խորհուրդը // «Հանդես ամսօրեայ»*: Թիվ 1-12: Վիեննա: 1996: 420-453 էջեր:
19. Պետրոսյան Ս. *«Մասնա ծեօրի» և «Վիպասանքի» գուգահեռ եռյակների շուրջ // «Հայկական «Մասնա ծեօրի» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը»*: ՀՀ ԳԱԱ ԳԻ, ՀԱԻ և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողով: Երևան: 2004: 68-75 էջեր:
20. Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ. *Հայոց երեք արքայագունների հասարակական ֆունկցիաների մասին // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*: Հ. III: Գյումրի: 2000: 57-72 էջեր:
21. Ջահուկյան Գ. *Հայերեն ստուգաբանական բառարան*: Երևան: «Ասողիկ» հրատ.: 2010: 819 էջ:
22. Арутюнян Н.В. *Топонимика Урарту*. Ереван. Изд-во АН Арм. ССР. 1985. 307с.
23. Афанасьева В.К. *Шумеро-аккадская мифология // “Мифы народов мира”*. Т. II. Москва. Изд-во Советская энциклопедия. 1988. 647-653 сс..
24. Гамкрелидзе Т.В., Иванов В.В. *Индоевропейский язык и индоевропейцы*. Т. II. Тбилиси. Изд-во Тбилисского университета. 1984. 1328 с.
25. “Древнегреческо-русский словарь”. Составл И. Х. Дворецкий. Т. I. Москва. Гос. изд. иностранных и национальных словарей. 1958. 1043 с.
26. Дьяконов И.М. *К вопросу о символе Халди. // «Древний Восток»*. 4. АН. Армянской ССР. Институт Востоковедения. Ереван. Изд-во АН Арм. ССР. 1983. 190-194 сс..
27. Мелетинский Е.М. *Тор // Мифология. Золотой фонд. Энциклопедия*. Москва. Науч. изд. “Большая российская энциклопедия”. 2003. 545-546 сс..
28. Меликишвили Г.А. *Урартские клинообразные надписи. №1*. М.. Изд-во АН СССР. 1960. 502 с.
29. Мещанинов И.И. *Аннотированный словарь урартского (биайнского) языка*. Ленинград. Изд-во “Наука”. 1978. 387 с.

References

1. Abeghyan M. Works. [*Yerker*]. Yerevan. Academy of Sciences publication. H. I. 1966. 571 p. (in Armenian)
2. Adonts N. History of Armenia. The sources. X-VI centuries BC [*Hayastani patmut'yun. Akunk'nery. X-VI dd. M.t. a.*]. Yerevan. "Hayastan" pub. 1972. 430 p. (in Armenian)
3. Alishan Gh. The ancient Armenian faith or heathen religion [*Hayots' hin havatk'y kam het'anosakan krony*]. Yerevan. "Hrazdan" pub. 2002. 295 p. (in Armenian)
4. Acharyan H. Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YSU pub. H. I. 1971. 699 p. (in Armenian)
5. Acharyan H. Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YSU pub. H. III. 1977. 635 p. (in Armenian)
6. Acharyan H. Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YSU pub. H. IV. 1979. 674 p. (in Armenian)
7. "Vocabulary of Armenian language" [*Barrgirk' hayots'»*]. Yerevan. "Matenadaran" pub. 1975. 445 p. (in Armenian)
8. "A Reading book of History of the Armenian People" [*Hay zhoghovrdi patmut'yan k'restomatia*]. H. I. Yerevan. YU pub. 1981. 943 p. (in Armenian)
9. Hmayakyan S. The state religion of the Kingdom of Van [*Vani t'agavorut'yan petakan krony*]. Yerevan. AS pub. 1990. 158 p. (in Armenian)
10. Ghanalanyan A. Popular tales [*Avandapatum*]. Yerevan. AS pub. 1969. 530 p. (in Armenian)
11. Malkhasyants St. Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. H. I. Yerevan. State pub. 1944. 608 p. (in Armenian)
12. Malkhasyants St., Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. H. III. Yerevan. State pub. 1944. 614 p. (in Armenian)
13. History of Armenia of Movses Khorenatsi [*Movsisi Khorenats'woy patmut'iwn hayots'*]. Yerevan. YSU pub. 1981. 587 p. (in Armenian)
14. Muradyan M. Lexicology. "Historical Grammar of the Armenian Language" [*Barragitut'yun. «Hayots' lezvi patmakan k'erakanut'yun»*]. H. II. Yerevan. AS pub. 1975. 383 p. (in Armenian)
15. "A new vocabulary of the Armenian language" [*Nor barrgirk' haykazean lezui*]. H. I. Yerevan. YSU pub. 1979. 1140 p. (in Armenian)
16. Petrosyan S. The role of the city of Alniunu and the Sun God in the political religious of early Urartu [*Alniunu k'aghak'i yev Arevasttsu dery vagh Urartui kronakan k'aghak'akanut'yan mej*]. // "Scientific works" of the Shirak center for armenological studies of the AS. H. VII. Gyumri. 2004. 11-18 pp.. (in Armenian)
17. Petrosyan S. The social estates and the manifestation of principle of three-estate society in ancient Armenia [*Dasery yev yerradasut'yan drsevorunnery hin Hayastanum*]. Yerevan. AS pub. 2006. 473 p. (in Armenian)
18. Petrosyan S. Tha significance of old Armenian three part Month [*Hin hayots' yerramasn amsuay Khorhurdy*]. // "Handes Amsorya". N 1-12. Vienna. 1996. 420-453 pp.. (in Armenian)
19. Petrosyan S. About the parallel triads in the "Sasna tsrer" and "Vipasank" [*«Sasna tsreri» yev «Vipasank'i» zugaherr yerryakneri shurj*]. // AS pub. Yerevan. 2004. 68-75 pp. (in Armenian).
20. Petrosyan S., Petrosyan L. About the social functions of the Armenian triple princes [*Hayots' yerek' ark'ayazunneri hasarakan funkt'sianeri masin*]. // "Scientific works" of the Shirak center for armenological studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia. H. III. Gyumri. 2000. 57-72 pp.. (in Armenian)

21. Jahukyan G. Armenian etymological dictionary [*Hayeren stugabanakan barraran*]. Yerevan. "Asoghik" pub. 2010. 819 p. (in Armenian)
22. Arutyunyan N.V. Toponyms of Urartu [*Toponimika Urartu*]. Yerevan. AS pub. 1985. 307p. (in Russian)
23. Afanas'eva V. K. Sumer-Akkadian mythology [*Shumero-akkadskaya mifologiya*] // "Myths of the peoples of the world"// T. II. Moscow. "Soviet Encyclopedia" pub. 1988. 647-653 pp.. (in Russian)
24. Gamkrelidze T.V., Ivanov V.V. Indo-European and the Indo-Europeans [*Indoyevro-peyskiy yazyk i indoyevropeytsy*]. T. II. Tbilisi. Tbilisi University pub. 1984. 1328 p. (in Russian)
25. "Ancient Greek-Russian Dictionary" [*"Drevnegrechesko-russkiy slovar"*]. T. I. Moscow. State. ed. foreign and national dictionaries pub. 1958. 1043 p. (in Russian)
26. Dyakonov I.M. To the problem of the symbol of Khaldi [*K voprosu o simvole Khaldi*]. // "Ancient East". 4. Yerevan. AS pub. 1983. pp. 190-194. (in Russian)
27. Meletinsky E.M. Thor [*Tor*].//Mythology. Golden fund. Encyclopedia. Moscow. "Great Russian encyclopedia" pub. 2003. 545-546 pp.. (in Russian)
28. Melikishvili G.A. Urartian cuneiform inscriptions [*Urartskiye klinobraznyye nadpisi*]. N 1. Moscow. AS pub. 1960. 502 p. (in Russian)
29. Meshchaninov I.I. Annotated dictionary of the Urartian (Biaynian) language [*Annotirovannyi slovar' urartskogo (biaynskogo) yazyka*]. Leningrad. "Nauka" pub. 1978. 387 p. (in Russian)

Ընդունվել է / Принята / Received on: 10.04.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 02.05.2023

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

#### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Սարգիս Գարեգինի ՊԵՏՐՈՍՅԱՆ՝** պատմ. գիտ. դոկտոր, դոցենտ,  
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
ստաջատար գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,  
Էլ. հասցե՝ Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

**Sargis Garegin PETROSYAN:** Doctor of Historical sciences, associate professor,  
Lead Researcher of Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA,  
e-mail: Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>

**Саргис Гарегинович ПЕТРОСЯН:** доктор исторических наук,  
доцент, ведущий научный сотрудник Ширакского центра  
арменоведческих исследований НАН, Гюмри, РА,  
эл. адрес: Vahe1996@mail.ru <https://orcid.org/0009-0008-8880-6936>